

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Տարեկան գին Կ. Պոլսոյ մը 8 ՄԷՏ.
Գրեթե անգ 10 ՄԷՏ.
Վեցամսեայ Կ. Պոլսոյ մը 5 ՄԷՏ.
Գրեթե անգ 5 ՄԷՏ.
Գրեթե անգ 5 ՄԷՏ.
Գրեթե անգ 5 ՄԷՏ.
Գրեթե անգ 5 ՄԷՏ.
Գրեթե անգ 5 ՄԷՏ.
Գրեթե անգ 5 ՄԷՏ.
Գրեթե անգ 5 ՄԷՏ.



ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 15 ՅՈՒՆԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Հեղինակն ինքիւր տակաւին տեսնելով է և Սթենդի արքունեաց և Բ. Դրան միջև բանակցութիւնը դեռ սկսած չեն։ Հեղինակն կառավարութիւնը կ'սպասէ եղբոր որ Պէրլինի դաշնագրութիւնը տէրութեանց կողմէն վաւերանայ, որպէս զի ծանուցադիր մը զրկէ Բ. Դրան խնդրելով որ խառն յանձնաժողով մը կազմուի նոր սահմանը Տէրութեանց խորհրդով զոյ երեքտասաներորդ ատենագրութեան համեմատ ուղղելու համար։ Բայց սահմանաց ուղղութեան նկատմամբ երկու կառավարութեանց մէջ ծանր անհամաձայնութիւնը կանոնադրական Տէրութեանց խորհրդով ուրախութեամբ ճշդուի։ Ի դժուար դեպքէ, որով խանութ և ուրիշ կողմեր կ'սկսեն նախաձեռնել կերթան, ոտկայն Բ. Դրանը վճարելու հիւսիսակողմը քանի մը քիչ մէջեր անդին սկսելով մինչև ի հարաւ քայլաւոր գետին բերանը հող տալ կուզէ։ Այս անհամաձայնութիւնը բառնալու համար կըսուի թէ Բուստաման Գերմանիոյ Գալլիոյ և Խալիպոյ միջնորդութեան գիւմեր է։

Ռուսը Ռուսիոյ կեդրոնական մասէն քաշուի սկսեր, և Եանի ու Ֆոքլանի չըջալայքը թողուցեր են։ Բայց մայրաքաղաքի չըջալայքը թողուի Չարթարի ամրութիւններէն քըսան և չորս ժամ անդին քաշուելու համար կը պահանջեն որ Անգլիական նաւատորմը Մարմարայէն և Դարդաւնի նեղուցէն դուրս ելնէ։ Այս պատճառաւ Բ. Դրան Անգլիական զենքանաւան հետ բանակցութեան մտեր է։ Եւսթինի բերդը պարզուեցաւ, բայց վարնա և Պաթմոս դեռ նոր պիտի պարպուին։

Պէրլինի դաշնագրութիւնը բոլոր Եւրոպական մամուլն խորհրդածութեան նիւթ եղած է, Անգլիոյ խորհրդարանին մէջ ալ շերտ վիճարանութիւններ կըլինան անոր վրայ։ Լորտ Սալիսբորի Պէրլինէն յուլիս 13 թուով ծանուցագիր մի կուղղէ առաջին նախարարին, որով երկարութիւն կը պատասխանէ իրեն դէմ Եւրոպիոյ մէջ եղած այն քննադատութեանց թէ իւր փայլի ի չըջալայքին հակառակ կերպիւ վարուած էր։ Լորտ Սալիսբորի ապրիլ 1 ի չըջալայքին նին պարբերութիւնները կըլինէ Պուլղարիոյ նկատմամբ, որոց մէջ մեր ժամէք Պուլղարիոյ մինչև Եգէական ծով տարածուին, և Սլավոն միծանանութեան մէջ Բուստաման մի մի պարբերութիւն։ Լորտ Սալիսբոր

րի յաղթանակաւ կը հետեցնէ թէ Արևելեան Ռուսիոյ գաւառին կազմութեամբ և Պուլղարիոյ սահմանին մինչև Պալքաններն ետ մղուելովն յունական տարրն ազատած է։ Ասկէց զատ Պուլղարիոյ մէջ Ռուսական բացառիկ ազդեցութեան առաջին առնուած է, քանզի Պուլղարիոյ Սահմանագրութիւնը միայն Ռուսիոյ վերադարձութեան ներքին չպիտի հաստատուի, այլ և Օսմանեան տեսուչ մ'ը Եւրոպական հիւստիստը պիտի հսկեն, և Կ. Պոլսոյ դեսպանաց խորհուրդն ալ վերին տեսուչութիւն մը պիտի կատարէ Պուլղարիոյ վերակազմութեան վրայ, որոյ գործադրութիւնը Ռուսական զօրաց մեկնելէն վերջը պիտի սկսի։

Պատերազմական տուգանքը բոլորովին վերջած է Պէրլինի դաշնագրութեան մէջէն, բայց Տէրութեանց խորհրդով տեսնուող Տէրութեանց մէջ չանաւորութեամբ է որ պատերազմական տուգանքը փոխարէն այսուհետեւ չը կընար հող տրուի, և Ռուսիոյ այս առնելը Բ. Դրան վրայ եղած ուրիշ պահանջներէ առաջնութիւն չը կընար ունենալ, այնպէս որ եթէ Բ. Դրան իւր բոլոր պարտքը վճարէ և ստակ տալու կարողութիւն ունենայ, այն ժամանակ Ռուսիա կընայ իւր առնելը պահանջել և առնուի։ Այս կերպիւ Ռուսիա յաւիտեան չկընար պատերազմական տուգանքը ձեռք անցունել։ Սակայն այս խնդիրն երկու կառավարութեանց մէջ առ կանկար մնայ։ Վերջապէս, կըսէ, Ս. Ժովուգաւտովիւնը պահուած է Պուլղարիոյ տրուած ծովեզերիայ կէսը Բ. Դրան վերագործուելու, և Պաթմոս միմիայն առևտրական նաւահանգիստ մ'ընելով։ Տրապիզոնէն ի Պարսկաստան Եւրոպական վաճառականութեան ճանապարհը բացուած է Պալիստինա թուրքիոյ տրուելով, թէ և Հայաստանի բերդերը Ռուսիոյ ձեռք կը մնան։ Վերջապէս ըստ Լորտ Սալիսբորի՝ ամեն կողմ Ռուսիոյ բացառիկ ազդեցութեան առաջին առնուած է։ Թուրքիոյ մայրաքաղաքը պաշտպանուած է անմիջական փոխադէ՛ հեռաւոր պատնէշ մը դրուելով, այն է Պալքանները, Ասիոյ Օսմանեան հողերուն պաշտպանութեան համար ալ ուրիշ կարգադրութիւններ ձեռք առնուած են։

Ի վերջոյ՝ Լորտ Սալիսբորի կը հարցնէ թէ արդեօք թուրքիա այս առիթէն օգուտ պիտի քաղէ, որ հաւանականաբար վերջինը պիտի ըլլայ, առիթ մը որ իրեն համար ընդունուելու Եւրոպական տէրութեանց և մանաւանդ Անգլիոյ միջամտութեամբ։ Այս խնդիր մ'է, կըսէ, որ կախում ունի թուրքիոյ պետական մարդոց լաւ կառավարութեան և բարենորոգմանց մասին։

րենց պարտքը կատարելու անկեղծ դիտաւորութենէն։

Այս հարցումն ամենուն կողմէն ալ կըլլար, բայց ասոր հետ ի միասին ուրիշ հարցում մ'ըստ կայ։ Թուրքիոյ պետական մարդիկ՝ երկրին կրած այսպիսի աղետից վրայ կարող պիտի ըլլան իրենց անկեղծ դիտաւորութիւնները կատարելապէս ի գործ դնել, և նոյն իսկ Լորտ Սալիսբորի կարող պիտի ըլլայ իւր ծրագիրը գործադրել։ Այսպիսի ծրագրաց և դաշնագրութեանց միջոցաւ երկիր բարեկարգելու դադափարները փորձի դրուեցան և գործադրարար անյաղ ելան։ 1836 ի ծրագիրները, դաշնագրութիւնները, Լորտ Սալիսբորի Ֆորտ-Ուէսթլիֆի և Լորտ Բալմէրսթոնի նման մարդոց ջանքերը խիստ փառաւոր և յուսադիր էին, այսու ամենայնիւ այն ծրագրաց հետ այն մեծ կարծեցեալ մարդոց բոլոր հաշիւներն ի դերն ելան, և թուրքիա եղաւ ինչ որ կը տեսնենք, այսինքն՝ եթէ չենք սխալը՝ 1836 էն առջի վիճակէն աւելի վատ։ Ուրեմն ներքին մեզ Լորտ Սալիսբորի յայտարարութեանց առջև չխոսարհիլ ի նշան հաւանութեան։ Այսօրուան օրս ժողովրդոց փրկութիւնն հեռաւոր մայրաքաղաքաց մէջ թուղթի վրայ գրուած պայմաններով ընդունիլ անկարելի է։ Ամեն ժողովուրդ պէտք է ինք իւր փրկութիւնն իւր ձեռքով հայթայթէ, և օրինաց սահմանին մէջ իւր իրաւունքը փնտռէ ու դանէ։ Ահաւասիկ Եւրոպա օրէնքը ստաւ, դաշնագրութիւնն հաստատեց, ուր տեսականապէս ամեն իրաւանց սկզբունք կայ։ Խնդիրն հոն է թէ արդեօք ժողովուրդն այն իրաւունքն ըմբռնելով իրականապէս ձեռք բերելու և գործադրելու կարողութիւն ունի։

Անգլիական Տէյլի Նիւշ լրագիրը կիպրոսի գրաւման առիթը հետեւալ խորհրդածութիւնը կընէ։

Մեք կիպրոսի կառավարութիւնն ստանձնեցինք Բ. Դրան տեղ, եկամուտին բացը վճարելու՝ իսկ աւելորդը Պոլսու տալու պայմանաւ։ Բոլոր Ասիական թուրքիոյ համար ալ մի և նոյն կերպիւ կընանք ընել։ Թուրքերը մեր կառավարութեան իրենց ցուցած օգուտները չուտով պիտի տեսնեն։ Ասիական գաւառաց վարչութեան նկատմամբ այսուհետեւ պատասխանատուութիւնն իրենց չի վերաբերիլ Եւրոպիոյ առջև, այլ մեր հովանաւորները պիտի պատասխարեն, և ոչ ևս ներքին կամ դժուարութիւն պիտի կրեն։ Եթէ դժուարութիւններ ծագին, մեք կըլուանք առաջին առնուի։ Եթէ իսլամը փրկատնէից վրայ յարձակին, մեք կընանք բարեկարգութիւնը վերա-

հաստատելու պարտաւորիլ և մեր իշխանութիւնը պահպանել։ Բոլոր Ասիական թուրքիոյ կառավարութիւնը տակաւ առ տակաւ մեր ձեռքին տակ պիտի իյնայ։ Մեք սնանկացելոյ մը վիճակը պարտաւորեց կողմէն քննողներու կը նմանինք, կամ աւելի բացայայտ խօսելով, ժառանգութիւնն ստացող երկրատէրերու կողմէն կարգեալ գործակատարներու կը նմանինք, որոնք երկիրները կարգի կը դնեն և հասոյթը տիրոջ կը զրկեն։ Այս դժուարութեանց առաջին առնուի համար է որ կիպրոսը գրաւեցինք։ Մեք հոն զօրք պիտի պահենք որպէս զի ամեն պատահաբաց համար ձեռուրնիս զօրութիւն դնուի։

Լորտ Սալիսբորի կըսէ Պ. Լէյարտի թէ՛ Ասիական թուրքիոյ մէջ գտնուած ազգերն ու ժողովուրդներն ինքնօրինութեան ունենալու կարող չեն, և անկախութեան չեն բազմար։ Այս խօսքը շատ տարակուսելի է։ Բայց եթէ ճշմարիտ ալ ըլլայ, չը հետեւի որ Անգլիոյ ազդեցութեամբ Օսմանեան կառավարութեան պաշտպանութիւնն անոնց անդորրութիւնն ու բարեկեցութիւնն ապահովելու լաւագոյն միջոցն ըլլայ։

Անկախութեան փափաք չըլլալուն պատճառաւ կարելի է տեսակ մը վարչական դրութիւն հաստատել որով ինքնօրինութեան կարողութիւնն հետզհետէ կարգաւորայ։

Անգլիոյ պաշտպանութեան ներքին մոտեցիլ զՕսմանեան տէրութիւնը չպիտի ազատէ իրեն կործանման նըկատմամբ։ Ասիոյ ազդեցութիւնը կարծիքն, որ Լորտ Սալիսբորի վախ կը պատճառէ։ Այլ կը հաստատէ այն կարծիքն և անոր ուժ կուտայ, հետեւաբար փոխանակ դանոնք ինքնավարութեան պատրաստելու, պիտի սովորեցնէ անոնց զԱնգլիա իրեն թուրքին անմիջական ժառանգորդը նկատել։

Միայն թէ, աւելի հաստատաբար պիտի հաշուեն Օսմանեան կայսրութեան անկումն, և սպասեն որ Անգլիոյ անոր տեղն անցնի։ Ասանկով քիչ ժամանակի մէջ ինքզինքնիս Ասիական ուրիշ կայսրութեան մ'առջեւ պիտի գտնենք, և անտարակոյս ծանրակշիւ և վտանգաւոր պատասխանատուութեանց ենթակայ պիտի ըլլանք այնպիսի պետութեան մը մէջ, որ անիշխանութեան մէջ ինկած է, և զոր այսպէս անխորհուրդ կերպիւ անկմանէ փրկելու կը ձեռնարկենք։

Վերջին թղթաբերով եկած անգլիական լրագիրը Լորտերուն ժողովին յուլիս 19 ի նստին մէջ եղած կարեւոր վիճարանութեանց նկարագիրը կը բերեն։

Լորտ Տէյլի կառավարութեան

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Դուրս գացած լրագրաց ծանոթութեամբ խորագրութեան վրայ է Լրագրոյ մերաբերեալ նամակ կամ որ և իցէ գրութիւն խմբագիրը — Տնորէն պիտի ուղղուի, Գալաթիա Սանտրոքճըլար, Հատուտ թիւ 198, Նորոխան, Մասիոյ գրասենեակը։
Հանրոյ ծանոթ չգնարուած նամակ չընդունուիր։

ստիպարհանգիստ թիւիւր յինչոյ տարե-
լով լրատ թէ իւր արտաքին գործոց
հախարարութիւնէն հետքեր չունի
ճառը՝ կէտքով համար ծախքերը
հիշելով հիշելով ինչ որ համար
հաշիւները հաշիւները հաշիւները
հաշիւները հաշիւները հաշիւները

Լորտ Սթըրլինգի կառավարու-
թիւնն աշխարհագրութիւնը պաշտ-
պաններով լրատ թէ Լորտ Տէրլին
ըստ իր սխալ է :

Լորտ Տէրլին հաստատեց իւր ը-
ստման ստուգութիւնը :

Լորտ Սթըրլինգի յայտարարեց
թէ ինք չըսեր թէ Լորտ Տէրլին
ստուգութիւնը սխալ է :

ՊԵՏԱԿԱՆ ԴԱՐՈՒՄԻՆ ՊԵՐԼԻՆԻ
(Երբ որ Բէ - 249)

Յօդ. 18. Ներկայ դաշնագրութեան
վաւերացմանց փոխանակութիւնէն անմի-
ջապէս յետոյ Եւրոպական յանձնաժողով
մը պիտի կազմուի, որոյ պաշտօնը պիտի
ըլլայ՝ Արեւելեան Բուսիանի կազմութեան
ծրագիրը չինել Օսմանեան Դրան հետ
խորհրդակցութեամբ : Սոյն յանձնաժո-
ղով մինչեւ երեք ամիս պիտի որոշէ կու-
սակալին իշխանութիւններն ու իրաւունք-
ներն, ինչպէս նաև դատարին վարչական
գաղտնական և երմտական գրութիւնն, ըս-
կըզգնակէտ բաներով Վիպլիթներու վը-
րայ չինուած այլ և այլ օրէնքներն և Կ-
Պոլսոյ դատարանները որոնք ևս երբեք նըս-
տին մէջ եղած առաջարկութիւններն :

Արեւելեան Բուսիանի համար որոշուե-
լիք տրամադրութեանց բովանդակութիւ-
նը կայտարարուի հրովարտակի մը նիւթ
պիտի ըլլայ, զոր Բ. Դուռը պիտի հըրա-
տարակէ, և տէրութեանց հաղորդէ :

Յօդ. 19. Մինչև որ նոր կազմութիւնն
ի դրութիւնէն, Արեւելեան Բուսիանի դա-
ւառին երմտական վարչութիւնն Եւրոպա-
կան յանձնաժողովը պիտի անտեսէ Բ-
Դրան հետ համաձայնութեամբ :

Յօդ. 20. Դրան և օտար տէրութեանց
միջև կնքուած և կնքուելիք ամեն դաշ-
նագրութիւնը պայմանադրութիւնը և կար-
գադրութիւնը, ինչպէս Օսմանեան կայս-
րութեան ամեն երկիրներուն՝ նոյնպէս և
Արեւելեան Բուսիանի մէջ գործադրելի
պիտի ըլլան : Օտարապետաց ստացած ա-
զատութիւններն ու արտօնութիւններն,
ինչ և ըլլայ անոնց վիճակը, պիտի յար-
գուին այդ դատարին մէջ : Բ. Դուռը կը
խտտանայ որ կրօնից ազատութեան վը-
րայ տէրութեան ընդհանուր օրէնքներն
ի նպատակ ամեն կրօնից ստանդարտը տայ :

Յօդ. 21. Արեւելեան Բուսիանի երկա-
թուղիները մասին Բ. Դրան իրաւունքն ու
ստորադասութիւններն ամբողջ կըլինան :

Յօդ. 22. Պաշտօնային և Արեւելեան
Բուսիանի մէջ Ռուսական դրամից զօրաց
գումարն 50000ը չպիտի անցնի, և պի-
տի բազմանայ վեց բաժին հետեւեալոց-
րէ և երկու բաժին հեծելազօրէ : Ասոնց
ծախքը գրաւեալ երկիրը պիտի հոգայ :
Գրաւող զօրքն իւր հաղորդակցութիւն-
ները պիտի պահէ Ռուսիոյ հետ, ոչ միայն
Բուսիանի մէջ, երկու պետութեանց
միջև կնքուելիք կարգադրութեանց համա-
ձայն, այլ և Ա. ծովու նաւահանգիստ-
ներէն, Վարնայէն ու Պուրկալէն, ուր
պիտի կրնան հարկ եղած միջերանցները
կազմել՝ ցորչափ ժամանակ որ տեէ զը-
րաւումը :

Արեւելեան Բուսիանի և Պաշտօնային
Ռուսաց կայսերական զօրքէն գրաւման
տնտեսութիւնն ինն ամիս որոշուած է ներ-
կայ դաշնագրութեան վաւերացմանց փո-
խանակութեան թուականէն :

Ռուսաց կայսերական կառավարու-
թիւնը կը խտտանայ իննամսեայ պայմա-
նաժամէն ետև մինչև երեք ամիս իւր
զօրքը քաշել՝ Բուսիանիայէն անցունելով
և ամբողջական զայն ալ պարպելով :

Յօդ. 23. Բ. Դուռը կը խտտանայ,
Կիրիլի կղզւոյն մէջ խոյնի մտքը գործա-
ղըրէ 1868 ի վարչական կանոնադրու-
թիւնն արդար դատուած թարեփոխու-
թեամբ :

Համաձայնութեան կանոնադրութիւնը, տե-

ղական պիտի յարմարեալ, ի բաց առ-
նելով Կիրիլի շնորհաւոր տալահարկութիւ-
նը, հաւասարապէս պիտի չինուի ու գոր-
ծադրին Եւրոպական թուրքոյ ուրիշ մա-
սանց մէջ, որոյ համար յատուկ կազ-
մութիւն մը նախատեսուած չէ սոյն դաշ-
նագրութեան մէջ :

Բ. Դուռն յատուկ յանձնաժողովոց
պիտի յանձնէ այն նոր կանոնադրու-
թեանց մանրամասն պարագաները իւր-
բազրիւ իւրաքանչիւր գաւառացի մէջ : Սոյն
յանձնաժողովոց մէջ տեղացի տարրն ըն-
դարձակապէս ներկայացեալ պիտի ըլլայ :

Այս աշխատութեանց արդիւնքն ըս-
կալիք կազմական ծրագրերը Բ. Դրան քնն-
նութեանը պիտի ներկայանան, նա ալ հը-
րատարակել և գործադրութեան դնել
առաջ Արեւելեան Բուսիանի համար կազ-
մուած Եւրոպական յանձնաժողովին կար-
ծիքը պիտի առնուի :

Յօդ. 24. Նիւթ պատահի, որ Բ. Դուռն
և Յունաստան Պէրլինի Տէրութեանց խոր-
հըրդոյն տասնեակներու պատենագրու-
թեան մէջ նշանակեալ սահմանադրի ուղ-
ղութեան վրայ չկրնան համաձայնել, Գեր-
մանիա, Աւստրո-Հունգարիա, Գաղլիա,
Մեծն-Բրիտանիա, Իտալիա և Ռուսիա
իրենց կը վերապահեն՝ բանակցութիւն-
ները դիւրացնելու համար իրենց միջնոր-
դութիւնն առաջարկել երկու կողման :

Յօդ. 25. Պանիոյ և Զէրաքի նա-
հանգներն Աւստրո-Հունգարիոյ կառա-
վարութեանը պիտի յանձնուին, որ Սեր-
վիոյ և Գարաաղի միջև տարածուած
Նովիպազարի գաւառին վարչութիւնն իւր
վրայ առնուլ չուզելով, Օսմանեան վար-
չութիւնը պիտի շարունակէ հոն : Սակայն
քաղաքական նոր վիճակն ինչպէս նաև
ճանքաներուն ազատութիւնն ու ապահո-
վութիւնն անմիջապէս պահելու համար՝ Ա-
ւստրո-Հունգարիա իրաւունք կը վերա-
պահէ իրեն պահպան զօրք դնել, և
Պանիոյ հին կուսակալութեան այս մա-
սին բովանդակ տարածութեան վրայ
գիտութեան և տնտեսական ուղիներ
չինել :

Սար համար՝ Աւստրո-Հունգարիոյ և
Թուրքիոյ կառավարութիւնը իրենց կը
վերապահեն սարքադաներուն վրայ խոր-
հըրդակցել :

Յօդ. 26. Գարաաղի անկախութիւնը
կը ճանչուի Բ. Դուռն և բոլոր այն միւս
դաշնագիր տէրութիւններէն՝ որք ցարդ
չկին ընդունած :

Յօդ. 27. Գաշնաղի տէրութիւնը հա-
մաձայն են հետեւեալ պայմաններուն վը-
րայ :

Գարաաղի մէջ կրօնական հաւա-
տաւեաց և դաւանութեանց տարբերու-
թիւնը չպիտի կրնայ մէկու մը դէմ հան-
ուիլ իրեն բացառութեան կամ անկար-
գութեան պատճառ ի մասին քաղաքային
և քաղաքական իրաւանց վայելման, հա-
տարակալին պաշտամանց և պատուոյ,
կամ այլ և այլ արուեստից և ճարտարու-
թեանց գործածման, ուր տեղ և ըլլայ :
Ամեն կրօնից ազատութիւնն ու ազ-
տաքին ազատամտեան տալահովեալ են
Գարաաղի բոլոր բնակչոյ՝ ինչպէս նաև
օտարաց համար, և բնաւ արգելք չպի-
տի դրուի այլ և այլ հասարակութեանց
թէ՛ նուիրապետական կազմաւորութեան
և թէ՛ իրենց հոգեւոր գլխոյն հետ ունե-
ցած յարաբերութեանց :

Յօդ. 28. Գարաաղի նոր սահմանե-
լին հետեւեալ կերպով որոշուած են . . . :

Յօդ. 29. Անթիպարի և ծովեզրերը Գա-
րաաղի հետ միացած են հետեւեալ պայ-
մաններով :

Այս երկրին հարաւարդովը գտնուող
երկիրներն որոշեալ սահմանադրին հա-
մաձայն մինչև Պոլսոյ մետր Թուրքիոյ
պիտի վերադառնան : Սերբայի հոյն
չև նշանակեալ հիւսիսային սահմանը Գաղ-
մաիոյ հետ պիտի միանայ :

Գարաաղիքը կառարեալ ազատու-
թիւն պիտի ունենան Պայանայի վրայ նա-
ւարկելու : Գերման անցած տեղերուն վը-
րայ ամբողջութեամբ չպիտի ընդգրկուի
մէ՛ որք Եւրոպայի քաղաքային պաշտա-
նութեան համար հարկաւոր ըլլան, բայց
քաղաքն վեց հազարամէթը հետաւորու-
թիւնէ անդին չպիտի տարածին :

Գարաաղի չպիտի կրնայ պատերազ-
մանաւ և նաւային զօրակ ունենալ :

Անթիպարիի նուահանգիստն և Գա-
րաաղի բոլոր շուրքերը փակուած պիտի
մնան ամեն տղայաց պատերազմանուե-
րու :

Գարաաղի հողին վրայ լինի և ծո-
վեզերաց միջև զանուած ամբողջութիւնը
պիտի քանդուի, և նոր ամբողջութիւնը չը
պիտի կրնան չինուիլ այն կողմերը :

Թէ՛ Անթիպարիի և թէ՛ Գարաաղի
ծովեզրերը բարեկարգական և ողջպա-
հական հսկողութիւնն Աւստրո-Հունգա-
րիա պիտի ընէ եղբարապահ թիւթ և չոգե-
նաւերու միջոցաւ :

Գարաաղի Գաղմաիոյ մէջ գործա-
ղըրեալ ծովային օրէնադրութիւնը պիտի
ընդունի : Աւստրո-Հունգարիա ալ կը
խտտանայ Գարաաղի տնտեսական զը-
րօսակին պաշտպանութիւնն ընել իւր հիւ-
պատուաց ձեռքը :

Գարաաղի իւր նոր հողին մէջ պողո-
տայ և երկաթուղի մը չինելու և գործա-
ծելու իրաւանց վրայ պէտք է համաձայ-
նի Աւստրո-Հունգարիոյ հետ Այս ճան-
քաններուն վրայ երթեկութիւնը կատա-
րելապէս ազատ պիտի ըլլայ :

Յօդ. 30. Գարաաղի հետ միացեալ
երկիրներուն մէջ կառուած կամ անար-
տաքուածք ունեցող Գաղմիներն և այլք,
որք Գարաաղի իշխանութեան հողէն
գլուրս բնակիլ ուզեն, կրնան իրենց ան-
շարժ ստացուածքը պահել՝ վարձու տա-
լով՝ կամ ուրիշ անձանց ձեռք անտեսե-
լով :

Մէկու մ'ատաղուածքը չկրնար ձեռ-
քն առնուիլ, բայց եթէ հասարակաց
օգտին համար, ըստ օրինի, և կանխաւ
հատուցում ընելով :

Թուրքիոյ և Գարաաղի միջև խառն
յանձնաժողով մը պիտի յանձնուի մին-
չև երեք տարի կարգադրել Պետութեան
ստացուածք և վազըֆոց վաճառման
գործածութեան և շահեցուցման եղա-
նակին վերաբերեալ բոլոր գործերն, ինչ-
պէս նաև անոնց մէջ մասնաւորաց ու-
նեցած շահերուն վերաբերեալ խնդիրները :

Յօդ. 31. Գարաաղի իշխանութիւնը
Կ. Պոլսոյ մէջ և ուրիշ հարկաւոր գաղա-
ւած տեղեր Գարաաղի գործակատար-
ներ ընելու համար ուղղակի Օսմանեան
Դրան հետ պիտի բանակցի :

Օսմ. երկրին մէջ ճանապարհորդող
կամ բնակող Գարաաղիք միջադպարի
օրինաց ընդհանուր սկզբունց և Գարա-
աղիքն իշխանութեան հատուածաւ առ-
վարութեանց համեմատ՝ Օսմանեան օրի-
նաց և իշխանութեանց պիտի հնազան-
դին :

Յօդ. 32. Գարաաղի զօրքերը ներկայ
դաշնագրութեան վաւերացմանց փոխա-
նակութեան մինչև քսան օր, կամ եթէ
հնար է՝ աւելի առաջ, պիտի պարպեն
իշխանութեան նոր սահմաններէն դուրս
գտնուող երկիրները զորս այս միջոցիս
գրաւած են :

Օսմանեան զօրքն ալ մինչև քսան օր
պիտի քաշուի Գարաաղի թաղուած տե-
ղերէն : Սակայն տասնէ-հինգ օր աւելի
պայմանաժամ մը պիտի շնորհուի Օսմ.
զօրաց, որպէս զի ամրացներէն մեկնին
և անոնց մէջ գտնուած սպայներն ու
նիւթերը փոխադրեն, իսկ անմիջապէս
փոխադրելն անկարելի եղած նիւթոց
ցուցակը չինեն :

Յօդ. 33. Ներկայ դաշնագրութեամբ
Գարաաղիք օրուած նոր երկիրներուն
բաժնին ինչպէս Օսմանեան պարսիք Գա-
րաաղի վրայ իշխելով, Տէրութեանց ե-
րեսիրտանները Բ. Դրան հետ խորհը-
ղակցութեամբ անոր գումարը պիտի ո-
ղչեն արդար հիման մը վրայ :

Յօդ. 34. Գաշնաղի տէրութիւնը Սեր-
վիոյ իշխանութեան անկախութիւնը կը
ճանչնէ հետեւեալ յօդուածին մէջ նշա-
նակեալ պայմաններուն կառելով :

Յօդ. 35. Սերվիոյ մէջ կրօնական հա-
ւատական և դաւանութեանց խտրու-
թիւնը չպիտի կրնայ երբեք մէկու մը դէմ
հանուիլ իրեն բացառութեան կամ ան-
կարողութեան պատճառ ի մասին քաղա-
քային և քաղաքական իրաւանց վայել-
ման, հասարակային պաշտամանց և պատ-
ւոց, կամ այլ և այլ արուեստից և ճար-
տարութեանց գործածման, ուր տեղ և
ըլլայ :

Ամեն կրօնից ազատութիւնն ու ազ-

տաքին ազատամտեան տալահովեալ են
Սերվիոյ բոլոր բնակչոյ՝ ինչպէս նաև
օտարաց համար, և բնաւ արգելք չպիտի
դրուի այլ և այլ հասարակութեանց թէ՛
նուիրապետական կազմաւորութեան և
թէ՛ իրենց հոգեւոր գլխոյն հետ ունեցած
յարաբերութեանց :

Յօդ. 36. Սերվիոյ հետեւեալ սահմա-
նադրին մէջ պարտաւիտեալ երկիրները
կ'ատանայ :

Յօդ. 37. Մինչև որ նոր կարգադրու-
թիւնը կնքուի, Սերվիոյ մէջ բնաւ փո-
խակցութեան չպիտի ըլլայ օտար երկիր-
ներու հետ ունեցած տնտեսական յա-
րաբերութեանց մասին :

Սերվիոյն անցած վաճառաց համար
փոխանցութեան օրէնք տուրք չպիտի
առնուի բնաւ :

Օտար հպատակաց ազատութիւններն
ու արտօնութիւններն՝ ինչպէս նաև հիւ-
պատական իրաւաւորութեան և պաշա-
պանութեան իրաւունքներն՝ ինչպէս որ
կան այսօր՝ լիովին պիտի գործադրեն,
քանի որ շահ ունեցող տէրութեանց հետ
համաձայնութեամբ փոփոխուած չըլլան :

Յօդ. 38. Եւրոպական թուրքոյ եր-
կաթուղւոյն աւարտման, կցման, ինչ-
պէս նաև չինուելիք գիծերուն վարչու-
թեան նկատմամբ Աւստրո-Հունգարիոյ
և վարիչ ընկերութեան հետ Դրան կըն-
քած պայմաններէն Սերվիոյ ինչպէս բա-
ժինը Սերվիոյ պիտի անցնի :

Այս խնդրոց կարգադրութեան հա-
մար հարկ եղած պայմանադրութիւններն
Աւստրո-Հունգարիոյ, Դրան, Սերվիոյ, և
իւր ձեռնհասութեան սահմանին մէջ Պուլ-
զարիոյ իշխանութեան միջև պիտի կնք-
ւին ներկայ դաշնագրութեան կնքուելէն
անմիջապէս յետոյ :

Յօդ. 39. Սերվիոյ հետ միացած եր-
կիրներուն մէջ անշարժ կալուած ունե-
ցող Իւլամը, որ Սերվիոյ իշխանութեան
երկրէն դուրս բնակութիւն հաստատել
ուզեն, պիտի կրնան իրենց անշարժ ըս-
տացուածքը պահել՝ վարձու տալով կամ
ուրիշ անձանց ձեռք մատակարարելով :

Թուրքո-Սերվիոյ յանձնաժողով մը ե-
րեք տարուան մէջ պիտի կարգադրէ Պե-
տական կալուածոց և վազըֆներուն ի
հաշիւ Բ. Դրան վաճառելու, շահեցնելու
կամ գործածելու եղանակին վերաբերեալ
բոլոր գործերն, ինչպէս նաև անոնց մէջ
մասնաւորաց շահերուն վերաբերեալ խն-
դիրներն, եթէ գտնուին :

Յօդ. 40. Մինչև որ Թուրքիոյ և Սեր-
վիոյ մէջ դաշնագրութիւն մը կնքուի,
Օսմանեան երկրին մէջ ուղեւորող կամ
բնակող Սերվիոյ միջադպարի իրաւանց
ընդհանուր սկզբունց համեմատ ընդու-
նելութիւն պիտի գտնեն :

Սահմանային զօրքը Բուսիանի

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 24 յուլիս :

Անգլիկ ածխահանքերուն մէջ աշխա-
տութեանց դաշնագրութիւնը կը շարունակէ
Մէն-Դանին մետաքսի գործաւորաց մէջ
ծագած դադարուածն ալ կընդարձակի,
ուր աշխատութեան դադարող գործաւո-
րաց թիւը 5000 էն աւելի է :

Փարիզ 24 յուլիս :

Նուսպար փաշան Եղիպտոս գնաց :
Լոնտոն 24 յուլիս :
Թուրքիոյ դեսպան Միսիրիս փա-
շան մեծ օրէն Կ. Պոլսոյ պիտի երթայ
Անգլիոյ բանելիք ապագայ աշխարհափա-
րութեան հիմնադրել Սուլթանին ներկա-
յացնելու համար :

Հուլիս 24 յուլիս :

Տիրիթի լրագիրն Հուլիս մէջ եղած
ցեղերուն վրայ Իտալիոյ կառավարու-
թեան կողմէ Աւստրիոյ կառավարութեան
բացատրութիւն տրուած ըլլալուն լուրը
սուտ կը հանէ :

Վիեննա 23 յուլիս :

Սերվիոյ դաշնագրի իշխան Գարա-
եօրիցի Արապի մէջ վար գրուեցաւ հո-
րը ըլլով :

Պէրլին 23 յուլիս :

Կայսրը Թուրքիոյ ջուրերը պիտի եր-
թայ, ուր Աւստրո-Հունգարիոյ կայսրը
պիտի ընդունի զինքը :

Լոնտոն 23 յուլիս, առաւօտ :
Տէյլի Թէլեգրաֆ լրագիրը կըսէ թէ

Գործընկերները հաշտեցան և միմյանց 20 օրով դուրս եկան :

Թաղիկը կրէ թէ Անգղիա Ասիոյ համար ձեռնհաս և հմուտ դատաւորաց ընտրութիւն , զօրեղ ոստիկանութեան մը կազմութիւն և տրոց վարձակալութեան բարձու պիտի պահանջէ :

Լոնտրա 23 յուլիս , իրիկուն . Լորա Պիքսոնֆիլտն ամբաստանութեան ենթարկելու խնդրագիր մը տրուեցաւ երեսփոխանաց ժողովին :

Արտաքին գործոց նախարարութեան խորհրդական Պ. Պուրբ մայիս 50 ի ծանուցադիրը ժողովին հաղորդել չուզեց :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ Սէլամիդի տարադրութեան ետեւ , որ Պէշիկթաշի Սէնիտիէ միջինը կատարեցաւ , տէրութեան նախարարը ի խորհուրդ գումարեցան երկուքի պարտանձնէ ընդ նախագահութեամբ վեհ . Ստիվանին :

Մալրաքաղաքիս Գաղղիական դեպտան Պ. Ֆուրիէ հինգշաբթի իրիկուն ճաշ մը տուաւ Բ. Դրան նախարարաց :

Վագրի լրագրին խօսքին նայելով Աւստրո-Հունգարական զորքն երէկ կամ այսօր Պոսնիո պիտի մըտնէին :

Ֆար տիւ Պոսֆոր լրագիրը կրէ թէ Բ. Դուռն այս միջոցիս յատուկ յանձնաժողովի մը ձեռք խել մը վարչական և երկտական օրինաց ծրարագրեր կը պատրաստէ , որոց ամբողջը բարեկարգ մանց ընդհանուր դրութիւն մը պիտի կազմէ : Յիշեալ լրագիրը կաւերյոնէ թէ Անգղիոյ գեպտան Պ. Լէյարտ մեծ ուշադրութիւն նուիրած է յանձնաժողովին աշխատութեանցն , և մինչև իսկ յաճախ ներկայ կը գտնուի :

Սոմանլը լրագիրը կը ծանուցանէ թէ Բ. Դուռն յատուկ խորհուրդ մը պիտի կազմէ , որոյ պաշտօնը պիտի ըլլայ քննել և ընտրել այն պաշտօնատարներն որք այսուհետեւ վարչական պաշտօն պիտի վարեն գաւառացի մէջ : Յիշեալ պաշտօններէն ամենց համար Գաղղիներէն և Անգղիներէն լեզուայ հմտութիւն պիտի պահանջուի :

Ռուսիա դատնուոյ թուրք գերիներն , որոց այժմութիւնը 67000 ի կը հասնի , հետզհետէ Սէլամիթօրջ հասնելու վրայ են , ուստից ալ նաւերով թուրքիա պիտի փոխադրուին : Պատերազմի նախարարութիւնը մեծ փութովնոր զգեստներ կը պատրաստէ յիշեալ զօրականաց համար , ինչպէս նաև անոնց փոխադրութեան պէտք եղած ծախքը :

Յիշեալ գերիներուն Ռուսիոյ մէջ ապրելուն համար եղած ծախսաց վճարման խնդիրն այս միջոցիս բանակցութեան նիւթ եղած է Բ. Դրան և Ռուսիոյ դեսպանատան միջև , իրարից թէ բանակցութիւնք յաջողութեամբ աւարտելու վրայ են , և այն ժամանակ գերի զօրաց թուրքիա փոխադրուելուն բնաւ արգելք չմընար :

Թուրք լրագրաց խօսքին նայելով , այս օրերս հարիւրէն աւելի պաշտօնեայք և սպասաւորք ճանրուեր են կայսերական պալատէն խնայողութեան պատճառաւ : Արձակուածներուն կարգն են հինգերորդ քարտուղարը , Հիւրքայի-Սատտէթի պաշ-

տօնեայքներն տասն երեք էֆէնտի , և Եօթանասուն ստորին կարգի պաշտօնեայք կամ ծառայք : Ասոնցմէ ոմանց հանգստեան թոշակ կապուեր , Զեպեալք ալ զինուորութեան առնուեր են յինասպետի աստիճանաւ : Նուազածուաց և Հատէմէ կոչւած սպասաւորաց թիւն ալ պակսեր է :

Անգղիոյ կառավարութիւնը կիպրոսի բնիկ ժողովրդէն կամաւոր զինուորութիւն մը պիտի կազմէ :

Ղալաթա-Սարայի Լիւթին միջանկարաշխութեան հանգէն հինգշաբթի օրը կատարեցաւ մեծ շքեղութեամբ , հասարակաց կրթութեան նախարար Միւնիֆ էֆէնտիի նախագահութեամբ , և երեք աշակերտք ուսմանքին տւարած ըլլալով վիպական ստացան : Ասոնց մին Հայ է՝ Միւրտի էֆէնտի անուն , երկրորդը թուրք՝ Եմին-Էստիֆէ էֆէնտի , և երրորդը Լիհայի վալի . քի էֆէնտի :

Հինգշաբթի գիշեր ժամը չորսին միջոցներն Ագասարայի թաղը հրդէհ պատահելով վեց տուն այրեցաւ :

Վանէն հետեւեալը գրուած է մեզ .

« Ազնիւ Մասիս .
« Տիգրանայեցոյ կողմէն Շիրվանու , Պոհմանու և Պէշիկթաշի , իսկ վանայ կողմէն Մոկաց նահանգին մէջ տեղ՝ մի փոքրիկ գաւառ էլ կայ , որ Մամրտանք կոչուի : Սա ունի 32 գեղորայ . որոցմէ 16 ի բնակիչք Բիւրք են և 16 ին Հայ :

« Ինչպէս կը պատմուի , երկար տարիներէ հետէ՝ ձմեռները ընտանեօք և խաչամբ հանգերձ Մուսուլի և այլ կողմերը , բայց ամառները վերայիցեալ Մամրտանից (Թերեւս Ամարտունից) հովասուն լեռները գաղթող կէօշեր Գիւրգերու Ալկան ստուած յեղէն 150 տան մետ , իւր ութ տարի առաջ , իրենց բազմաժամանակեայ սովորութիւնը թողած կսկին Մամրտանից Հայ գեղերու մէջ իրենց որջերը շինել , տուարներն ու խաչները ձրի բաւել տալ Հայոց , և ուստես ու հազուատնին ալ ձրի կամ բունի առնելէ ի դատ , տարին մի քանի անգամ տուրքեր էլ հանաքել , մինչդեռ կառավարութիւնն էլ իւր տուրքերը կը հաւաքէ եղեր :

« Անցեալ տարի՝ երբ Հայաստանի ընդհանուր հարստահարութիւնը կ'սկիւն , Ալկանցիք և գրակից 16 գեղորէից Գրգերն զՄամրտանցոյ բոլոր ստացուածքը կ'ուղղէ չափ կողակտն , թող զուր տարուան հետզհետէ կողակտներն Ալկան , երբ Ալկանցիք լեռներէն վար կ'իջնեն , զիրենք երկու ճիւղի բաժնուած և իւր իւրաւ լծնամի կը ցուցնեն Հայոց աչքին Երկու ճիւղն ալ՝ վերջին աստիճան կը նեղեն զՄամրտանից Հայս , ասելով թէ՝ « մեր ճիւղէն պահնորդ լեռնեցէք ձեր գեղին , մեր լծնամի ճիւղին դէմ դձեղ պահպանելու » :

« Թշուառ Հայերն՝ որը մէկէն՝ որը միւսէն պահնորդ լեռներու կը հարկադրին , 1000 տկան դահկան մէն միոյն վարձք տալով , երեք-չորս ամսոյ համար : Այլ ևս Ալկանցիքն իրենց ստանալական նպատակին կը հասնին . այսինքն՝ առիթ բռնելով Հայոց գեղերէն ամանց իրենցմէ պահնորդ չառնելը , կսկին երկուստէք 16 Հայ գիւղերն ալ բոլորովն յաւարի առնուլ զբոսանօք . պահնորդն ու լծնամին՝ սէր և հաշտ իւրարու աջակցելով : Վերջապէս այնքան անգթութեամբ կ'ստացան ,

մինչ որոքմէի Հայերն՝ իրենց բոլոր կենդանիներ , կահն ու կարասիքք , տուեն ու տեղը , արան ու այգին , վանքն ու եկեղեցին և անոնց դարդերն ու սպանները կորսնցնելէ ի դատ , թէ այլ և թէ կին , թէ պատանի և թէ օրիորդ , ամենքն ալ իրենց վրայի մերկածածուկներն իսկ կ'ստացան տուած , գրեթէ՝ մերկ և առականքնին բաց գաղթելով , երեք օր առաջ աստ եկան , և պատպառիկնի տակը պառկին նիհար ու դարկահար :

« Այս 16 գեղերն , ինչպէս կը պատմեն դժբաղդ գաղթականքն իրենց արտասուակէզ աչքերէն արիւն արարուքը հոսելով , և որոց կը վկայէ հօթը տարի առաջ յԱպարանից Սիւնի վանքէն ի քաղաքս գաղթող քահանայ մի , համեմատական հաշուով՝ ունեցեր են երբեք մինչ քառասունական տուն , մէն միոյ ընտանիքը եօթնական անձերէ բաղկացեալ (ընդամեն 640 տուն և 4480 բնակիչ) և 700 տկանէն աւելի ոչխար , և պէտք եղածին չափ եղն ու ջորի (գոմէշը չգործածուիր այս կողմերը) և այլն ճոխութիւնք . . . :

« Բայց ութը տարի հետզհետէ կողոպտուելով ու գաղթելով , բնականաբար թէ՛ բնակչաց և թէ՛ իրենց հարստութեանց գրեթէ կէսը հաղիւ հաղ մնացած էր , և ահա անոնք ալ այսօր յիրուցան եղան . . .
« . . . Խմբագիր , միթէ տա ալ անցեալ տարի՝ է , որ լեզուները չարժեքուր պէս՝ դձեղ ի լուծիւն հարկադրեն , և Արէսն ու Ատրէան չճանչող թուրք լրագիրք աղաղակ բառնան թէ՝ « Հայերն ալ կապտատմբին . . . » , Մի՛ լռէք և մի՛ դադարէք , կաղաչմ յանուն Հայ ազգութեան , այլ խօսեցէք , գործեցէք ինչ որ վայել է խօսիլ և գործել Ձեզ նման անկեղծ հայրենասիրի , իւր առաւարտալ և գերի ազգին համար :

23 մայիս 1878
Ի վան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ	
ԷՍԶԱՄԸ ՈՒՄՈՒՄԻՔ	
14 յուլիս ուրբաթ իրիկուն	16.28
15 յուլիս շաբաթ առաւօտ	
բացուեցաւ	16.28
կէս օրին	16.29
բուսիլի երկաթուղի	Ֆր. 159.50
թղթագրամ	Լր. 283
ԸՆԹԱՅՐ ԱՐԺԵԹՊՈՑ	
Կ. Պոլիս 14 Յուլիս	
Ստիվէթ Ժէնէրալի բաժ. Անգլ. լր.	4.30
« ֆոխանակութեան »	3.25
Կ. Պոլսոյ Պոսթային »	5.30
Քրէտի Ժէնէրալ »	5.30
Քրէտի Օսթրո-թուրք »	-
Ֆրիս 1863	Ֆր. 100
« 1865 »	102
« 1869 »	93
« 1872 »	31 20
« 1873 »	84
Թրամուայ	Օսմ. լր. 1 60

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՅՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՑ ԱԶԳԻՆ ԱՍՐՁՈՒԹԵԱՆ

Ֆոքշանու ազգային վարժարանաց համար Հայերէնի քաղաքահաւատ գաւառաւ մը կուգուի գոհացուցիչ ամանականու . ուստի այս պաշտօնին վաւերացող հայադէտք կը հրաւիրուին ամսոյ 21 ի ուրբաթ օրն , ժամ մինչև 6 ներկայանալ Ուսում . խորհրդոյ ի Ղալաթիա , Ազգ. Մատենադարան :

13 յուլիս 1878 (Կէն)
Ի Պատրիարքարան Հայոց
Կ. Պոլիս

. . . Խմբագիր Մասիս պատուական լրագրոյ :

Խորհուրդս կը խնդրէ որ բարեհաճէք յետագայ աղբք Ձեր աղբք .

գուտ լրագրոյն մէջ հրատարակել , որոյ համար կանխաւ մեր շնորհակալութիւնն կը մատուցանեմք :
78 յուլիս 9 ի գիմաց Թ. Խորհրդոյ
Գաղղի Գաղղի
Սերէիէ Կէ-Լէիէ

ԱԶԳԻ

Թաղիս Ս. Թագաւոր Եկեղեցւոյ կալուածներէն Բերա Մանկասար փողոցը 1 թուանչախաւ պարտէզն , որ ուրիշին վարձու տրուած ըլլալով պայմանաժամն յառաջիկայ օգոստոս ամսոյ 15 ին կը լրանայ , կրկին վարձու տալու համար աճուրդի դրուած է և տարեկան մինչև 4000 զրշ ընթացիկ դրամի վարձոյ անձ պատրաստ կը գտնուի :

Ռատի յօգուտ և ի շահ Ս. Եկեղեցւոյս կաղաւարտուի , որ նոյն պարտէզն վարձել փափաքող անձինք եթէ կան , թուականէս մինչև 15 օր խորհրդարանս ներկայանալով՝ խորհրդոյս հետ աշխարհութեան մտնեն ,

. . . Խմբագիր .

Պատիւ ունիմք զեկուցանել Ձեր Աշխուրթեան որ յառաջիկայ կիւրակէ օր , 16 յուլիս , Հայկ. կրթարանի սանոց միջանակարաշխութեան հանգէսը պիտի կատարուի գիւղիս Բարեպետ ընկերութեան թատրոնը : Հանգէք , Մեծ . Տէր , Ձեր և Ձեր աշխուրջք ընտանեաց ներկայութեամբ շքադիր լինիլ Հայկական սանոց սոյն խոնարհ հանգիսին :

Միջանակարաշխութիւնն , յետ աւարտման Եկեղեցւոյ , կսկսի ճիշդ ժամը 3 ին :

13 յուլիս 1878 Մնամք խորին յարգ .
յՈՐԹԱՔԵՅՈյ ի գիմաց Տնօրէն .
Յ. Գաւգէի

. . . Խմբագիր .

Կը խնդրենք Ձեր պատուական լրագրոյ միջոցաւ բարեհաճէք ծանուցանել թէ յառաջիկայ կիւրակէ՝ որ է յուլիս 16 , Եէնի գաղղի Հայկանոյշ վարժարանին մէջ յաւարտ Ս. Եկեղեցւոյ պաշտաման (ժամ 2 Վ 2ին) պիտի առեկարանէ Մեծ . Տնօրէն Ե. Ֆէնտի Մանալեան , իրեն շնորհ ընելով « Հայք և Հայաստան » :

Հարկ է ըսել թէ՛ այն պատեհութեամբ յիշեալ վարժարանի ձեռարձակուող թուրք վիճակահանութիւնը նիւթի կատարի , և ի պատիւ հանգիստականաց՝ աշակերտեցող կողմանէ ազգային երգերով դաշնակներ պիտի զարնուին :

Սոյն հանգէսէն թաղիս երկսեռ վարժարանաց նիւթական նպաստ մի յառաջ բերելու նպատակաւ արանց 2 զրշ սղջ լծով տալու և կանանց ու մանկանց 1 զրշ լծով թղթադրամուսք որոշուած է երկսեռ վարժարանաց խնամակալութեան կողմանէ :

Յօժարեցէք , ազնիւ տէր , կանխաւ ընդունիլ մեր շնորհակալութիւնը և սիրոյ ողջոյնը :

13 յուլիս 1878 Մնամք յօթարար Եէնիգարու
Խնամակալ
Երկսեռ վարժ. թաղիս
Հմայեալ վարդ. Դեմաթեան

ՊՈԴՈՍ ԷՖԷՆՏԻ ՄԿՐՏԻՉԵԱՆ

Առաջին կարգի վիպեալ փաստաբան
Պատրաստ է ամեն կարգի օրինաւոր դատերու փոխանորդութիւնյան ձրն առնուլ դատերու վերաբերեալ գրութիւններ խմբագրել և ուղղորդելու դատական գործոց խորհուրդ տալ :

Գրասենեակն է Չաքմաքըրլար Գիւլիւք Եէնի խան վերնայարկ թիւ 9 :

4,444,444. 5,000 1500